**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

«10»« Հունվարի » 2026թ. ՆՄՈ/ 128 Ա

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշման N 9.1 հավելվածը,Հայաստանի Հանրապետության մարզերի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում « 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչներին օժանդակության ծրագիր» ծրագրի շահառու ուսուցիչներին լրավճարի տրամադրումն իրականացնելու նպատակով՝

**որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին «Հանրակրթության ծրագիր» ծրագրի « 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչներին օժանդակության ծրագիր» ծրագրի շրջանակներում տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված 26 028 000 ( քսանվեց միլիոն քսանութ հազար ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարից 5 519 120 (հինգ միլիոն հինգ հարյուր տասնինը հազար մեկ հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ

գումարը վերաբաշխել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայության թվով 17 (տասնյոթ) հանրակրթական դպրոցներին՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստ Ա. Հովհաննիսյանին՝ կնքել գումարի հատկացման պայմանագրեր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

0901 ք. Արմավիր, Աբովյան -71 Հեռ.՝ 060901010, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am, armavir.qartughar@gmail.com,

*Հավելված*
*ՀՀ Արմավիրի մարզպետի*
*2026 թվականի մարտի 10-ի*
*N ՄՊ/128- Ա որոշման*

ՑԱՆԿ

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայության հանրակրթական դպրոցներին « 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչներին օժանդակության ծրագիր» ծրագրի շրջանակներում 2026թ-ի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով տրամադրված գումարի վերաբաշխման

| պ /հ | Դպրոցի անվանումը | ՀՀ դրամ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 6 | Արմավիրի N 9 հիմնական դպրոց | 86260 |
| 17 | Արտաշարի միջնակարգ դպրոց | 341130 |
| 29 | Հացիկի միջնակարգ դպրոց | 287540 |
| 36 | Նորավանի միջնակարգ դպրոց | 142460 |
| 48 | Վաղարշապատի ***Հ.Հովհաննիսյանի անվ. N 3*** հիմնական դպրոց | 416930 |
| 52 | Վաղարշապատի Ռ.Պատկանյանի անվ. N 9 հիմնական դպրոց | 287540 |
| 53 | Վաղարշապատի Վ.Ռշտունու անվ. N 11 հիմնական դպրոց | 528000 |
| 59 | Ամբերդի Հ.Նավասարդյանի անվ. միջնակարգ դպրոց | 453330 |
| 60 | Այգեկի Մ. Մովսիսյանի անվ. միջնակարգ դպրոց | 415330 |
| 61 | Այգեշատի միջնակարգ դպրոց | 0 |
| 64 | Արագածի միջնակարգ դպրոց | 305460 |

| | | |
|---|---|---|
| 66 | Արշալույսի Ս.Գրիգորյանի անվ. միջնակարգ դպրոց | 281000 |
| 67 | Արտիմետի միջնակարգ դպրոց | 422160 |
| 68 | Արևաշատի միջնակարգ դպրոց | 414320 |
| 72 | Գրիբոյեդովի Վ.Ռոստոմյանի անվ. միջնակարգ դպրոց | 237870 |
| 83 | Հովտամեջի միջնակարգ դպրոց | 273160 |
| 88 | Նորակերտի միջնակարգ դպրոց | 204470 |
| 98 | Արտամետի Գ. Մարգարյանի անվ. միջնակարգ դպրոց | 422160 |

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ